Զարմանալի է ազգերի կրօնական հայեացքների եւ նրանց պատկերացումների փոխանցումը մէկից միւսին. հետքեան կրօնական պատկերացումներից շատերը անցել են Ասորեստանցիներին. Հաղաղը, Իշտարը, Աշուրը արեգակի թեւաւոր սկաւառակով, որ տեսնում ենք նաեւ Տէմանի քանդակի ճակատին: Բայց արեգակի թեւաւոր սկաւառակի պատկերացումը հետքեանների անցել է Եգիպտոսից, Ասորեստանցիները առել են Հիտիտներից, իսկ Պարսիկներն էլ խրացրել են փոքրիկ փոփոխութիւններով Ասորեստանցիներից: Այս համառօտ տեղեկութիւնն էլ բաւական է հասկանալու եւ գեղարուեստական մոտիւների եւ ձեւերի փոխանցումը մէկից միւսին:

Բաղդատի Թանգարանի սասանեան բաժնում տեսել ենք մեր կոթողներին ձեւով նման մի բեկոր, բայց շատ եղծուած վիճակում:

Սրանք ցուցումներ են, բայց ոչ գրական ապացոյցներ, մեր կոթողների Հաթեան ծագման վարկածի համար: Այդ փոխանցումը կարող է անմիջական լինել կամ միջնորդաբար: Նորանոր գիւտեր Հայաստանում կամ Առաջաւոր Ասիայի հարեւան երկիրներում, գուցէ, աւելի լոյս եւ ապացոյցներ կը բերեն այս երեւոյթը լիովին եւ բազմակողմանի կերպով հասկանալու:

Պատկ. 108

Ժե.

Ժամանակի վերաբերութեամբ խուսական նշանակել չենք կարող ոչ մէկի համար, այլ միայն դարաշրջաններ: Մենք տեսանք, թէ նրանք բոլորն էլ, գրեթէ առանց բացառութեան կապուած են բազիլիկ եկեղեցիների երեւոյթի հետ, բոլոր նշաններից դատելով